

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Քրիստոսի ծննդեան մեծ եւ սխանչելի խորհուրդին առիթով, Ձերդ Ամենապատուեալ Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ համայն մեր հաւատացեալ ժողովուրդին կը յայտնենք մեր հայրապետական սիրոյ ողջոյնը:

Ձերմայեա կը ցանկանք բոլորիդ առեւտասուրիւն եւ աստուածային օգնութիւն, Ձեր աշխատանքները աւելի պտղաբեր դարձնելու համար, յօգուս մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ ի բարօրութիւն հայ ժողովուրդեան: Կը ցանկանք ի արեւ որ Տիրաւանդ խաղաղութիւնը եւ ի մարդիկ հանութիւնը իբրեւ ցոյ քաղցրածաւալ իշնեւ աշխարհի վրայ. ամեն:

ՎԱԶԳԻՆ Ա.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Ի պատասխան Ձերդ Սրբազնութեան Նոր հարւոյ եւ Ս. Ծննդեան բարեմաղորութեանց ու օրհնութեանց, երախտապատէր զգացմամբ հանդերձ ընտանեօք կուզանք մաղբել Ձերի երկար եւ բարեբաստիկ տարիներ: Աստուած բոլ միշտ հաստատուն պահէ Ս. Արքայ Ձերդ Սրբազնութեան իմաստուն ղեկավարութեան ներքեւ:

ԳԷՈՐԳ ԵՍԱՅԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

Ճիշդ հիմա ընդունած ենք ջերմ շնորհակալութեամբ Ձերդ Սրբազնութեան շնորհաւորական հեռագիրը, որուն կը պատասխանենք մեծ գոհունակութեամբ եւ փոխադարձ զգացումներով:

ԿԻՒԼ ՊԷՆԿԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԼԱՆՔ - ԲԵՄՍԻԱՆՔ

● Կիր. 1 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի մեր վերնամատրան մէջ, ժամարարն էր Հօգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան: Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսիսեան, «Տէր ողորմեայ» էն առաջ, խօսեցաւ տպաւորիչ քարոզ մը:

● Դշ. 4 Յուն. — Վաղուան մեծահանգէս նախատեսակը պաշտուեցաւ շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ, Հանդիսապետն էր Գեր. Տեղապահ Ս. Հայրը: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը «Յունեցէք զՏէր» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան:

● Եշ. 5 Յուն. — Ս. Դաւթի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր արդար առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Արքայոյ Տեառնաղմի): Հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Գեր. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան, Ներկայացնելով կեանքն ու զործը օրուան տօնելի երկու մեծ Սուրբերուն ու յիշելով երախտաւոր յաջորդները Յակոբոս Տեառնեղբոր — պատրիարքները Առաքելական Ս. Աթոռոյ — կանգ առաւ անոնցմէ նշանաւոր հանդիսացող զէմբերու առջեւ զրուստելով անոնց անձնուէր ճիգերը ի պայծառութիւն եւ ի փառս Ս. Աթոռոյ: Ըստ սովորութեան, Ս. Պատարագէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն, Ս. Աթոռոյս բոլոր հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար:

● Ուր. 6 Յուն. — Վաղուան նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տեղապահ Սրբաւան Հայրը: Տօնին բուրժառակիր վարդապետներն էին Հօգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան եւ Հօգ. Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան:

● Եր. 7 Յուն. — Ս. Սեփիմասի նախապաշտօն: Այս տարի եւս, Ս. Աթոռոյս Բարեշնորհ Սարկաւազները, Թիւոյ 6, առաջնորդութեամբ երկու բուրժառակիր վարդապետներուն, պանծացուցին օրուան տօնը: Անոնք զգեստաւորեալ, սաղաւարտ ի գլուխ, կատարեցին առաւօտեան ժամերգութեան վերջին մասը: Արարողութեան կը նախագահէր Գեր. Տեղապահ Ս. Հայրը: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Սուրբ Ստեփանոս մատրան մէջ: Պատարագեց Հօգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան:

● Կիր. 8 Յուն. — Քառածայն Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ երգեցողութիւնը կը վարէր ժառնգ. վարժարանի եւրաթշուրթեան ուսուցիչ Պր. Սահակ Գալայեան: Պատարագեց Հօգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան: Ս. Թ. վարժարանի բովանդակ աշակերտութիւնը, ինչպէս նաև օտար վարժարաններու հայ ուսանողներ ստացան Ս. Հաղորդութիւն:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ վաղուան նախատեսակը: Հանդիսապետն էր Գեր. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան:

● Բշ. 9 Յուն. — Ս. Պետրոսի եւ Պողոսի առհ. Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամասերուն մէջ մատուցեց Զոգ. Տ. Խաճահկ վրդ. Դադարեան:

— Վաղուան մեծահանգէս նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տեղապահ Ս. Հայրը:

● Գշ. 10 Յուն. — Տօն Ս. Որդւոցն Որոման՝ Յակոբայ եւ Եղիմիան: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատարան մէջ հանդիսաւորապէս պատարագեց եւ քարոզեց Գեր. Տեղապահ Ս. Հայրը եւ ապա նախագահեց երրորդ անգամ մեծահանգէս թափօրին: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը «Որ էնն յեւթեան» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան, ուր Տեղապահ Ս. Հօր օրհնութեամբ փակուեցաւ Աւագ Տօներու շարքը:

● Եր. 14 Յուն. — Կոթ Տօնայ առթիւ, Մայր Տաճարին մէջ պատարագեց Զոգ. Տ. Գէորգ Արդ. Նազարեան: Ապա, շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարանի լուսաղարացում զանկէն, իրեն հետեւեցաւ ժողովուրդի հոծ բազմութիւն: Պատրիարքարանի մէջ Գեր. Տ. Հայկազուն եպս. ի զիմաց Միաբանութեան, Ամանորի առթիւ, շնորհաւորական խօսքեր ուղղեց Տեղապահ Ս. Հօր: Նոյնը ըրաւ խնամուած ուղերձով մը, Բար. Կարապետ Սրկ. Գապագեան, ի զիմաց Ժառանգ. Վարժարանի եւ ընծայարանի ուսանողութեան, իսկ կարմաղ-գնետ փոքրիկ մը՝ ոտանաւոր մը արտասանեց ի զիմաց Ս. Թ. Վարժարանի ուսանողութեան: Ժառանգաւոր սաներ երգեցին Ամանորի ձօնուած երգ մը, որմէ ետք Տեղապահ Ս. Հայրը բաշխեց ներկաներուն մէկական նարինջ:

● Կիր. 15 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբութիւն, մեր վերնամատարան մէջ: Պատարագեց եւ քարոզեց Զոգ. Տ. Մաշտոց վրդ. Բարխուսեան, խօսելով Աստուծոյ հայրութեան եւ մարդոց որդիութեան զաղափարին վրայ: Ըսաւ թէ ինչպէս որ ծնողքներ իրենց զաւակներու անհնազանդ կեցուածքէն կը նեղանան, նոյնպէս ալ Տէրը կը վշտանայ երբ իր որդիներէն ոեւէ մէկը անստուգ իր պատուիրաններուն:

● Գշ. 18 Յուն. — Ճրպայոց Ս. Եմնդեան: Առաւօտեան ժամը 10ին, Գեր. Տեղապահ Ս. Հօր զլիաւորութեամբ, Միաբանութիւնը Մայրավանքի դռնէն ինքնաշարժերու մէջ տեղաւորուած մեկնեցաւ զէպի Բեթղեմէմ, ուր հասաւ կէսօրուան մօտ ու Ս. Եմնդեան վանքի հանդիպակաց հրապարակին մէջ զիմաւորութեան տեղւոյն կառավարական կազմէն, Զանգեբուր զօղանջին ու ժողովուրդի բազմութեան ընդմէջէն թափօրը յառաջացաւ զէպի Տաճարի դաւթը. Դպրաները «Խորհուրդ մեծ» շարականը երգելով առաջնորդեցին Միաբանութիւնը զէպի վանք, ուր զիմաւորութեան եկողներ պատուաւորութեան:

— Ժամը 2.30ին, Տեղապահ Ս. Հօր զլիաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ» ի կարգով մուտք գործեց Ս. Եմնդեան Տաճարը եւ ուղղուեցաւ զէպի Ս. Այրը, որուն ուխտէն ետք, Տաճարի մեր բաժնին մէջ կատարուեցաւ ժամերգութիւն ու ճրպայոցի արարողութիւն: Մա-

տուցուեցաւ նաեւ Ս. Պատարագ: Ժամարան էր Զոգ. Տ. Խաճահկ վրդ. Նազարեան: Ապա, Գեր. Տեղապահ Սրբազանը նախագահեց Ս. Եմնդեան նախատեսակին, որմէ ետք «Խորհուրդ մեծ» երգեցողութեամբ թափօրը բարձրացաւ մեր վանքը ուր Աւետարանի ընթերցումէն եւ «Փառք ի բար, ձուռն» երգեցողութենէն ետք ամէնքը նստան Ս. Եմնդեան աւանդական ճաշասեղանին:

— Իրիւրուան ժամը 10ին, խորհրդաւոր ու զուարթագին նշեցին Տաճարին հայկական դան. գերը ու քիչ յետոյ սկսաւ գիշերային պաշտ. մունքը Բեթղեմէմի Ս. Եմնդեան եկեղեցիին մէջ:

● Եշ. 19 Յուն. — Եմնդեան եւ ԱՍՏՈՒԱՅՈՒՄԱՅԱՏՈՒԹԻՒՆ: Կէս գիշերին, Միաբանութիւնը եւ ներկայ հաւատացեալներ իջան Սուրբ Եմնդեան Այրը, ուր կատարուած արարողութիւններէն մաս մը ձայնաւորութեամբ Յորդանանի Ռատի կայանէն ի սփիւռս աշխարհի: Կարգացուեցաւ Ս. Եմնդեան Աւետարան, երկսեռ երգչախումբի կողմէ երգուեցաւ «Փառք ի բարձունս», «Այսօր տօն է Սուրբ Եմնդեան» եւայլն, որմէ ետք Գեր. Տեղապահ Ս. Հայրը տուաւ հանուր հայտութեան ուղղուած Ս. Եմնդեան պատգամը ու վերադարձաւ Երուսաղէմ, իսկ մնացեալ հանդիսութեանց նախագահեց Գեր. Տ. Հայկազուն եպս. Արքա-համեան: Ասկէ անդին մատուցուեցան զոյգ Ս. Պատարագներ: Առաջինը մատուցեց Զոգ. Տ. Վաղ-գէն Արդ. Գրգորեան, որմէ ետք «Խորհուրդ մեծ» արարողութեան նախագահեց եւ քարոզեց Գեր. Տ. Հայկազուն եպս. Արքահամեան, «Զի ոչ զոյր նոցա տեղի յիշեանին» (Ղուկ. Բ. 7) քնարանով եւ ապա հանդիսաւորապէս մատուցեց վերջին Սուրբ Պատարագը Քրիստոսի Եմնդեան տեղւոյն վրայ, որուն ընթացքին ներկաներէն շատեր ստացան Ս. Հաղորդութիւն: Արարողութիւնները աւարտեցան արեւածագին, Ս. Եմնդեան վանքին մէջ կատարուած Աւետարանի ընթերցումով:

— Աւանդական նախահաշէն ետք, Միաբանութիւնը ինքնաշարժերով համբայ ելաւ զէպի Երուսաղէմ, ուր հասաւ ժամը 9ին ու բարձրացաւ Պատրիարքարանի լուսաղարացում զանկէն ուր Գեր. Տ. Հայկազուն Սրբազանի Գեր. Տեղապահ Ս. Հօր ուղղած շնորհաւորական խօսքերէն ետք, Տեղապահ Սրբազանը Ս. Եմնդեան աւետիսով ու «Պահպանիչ» օրհնեց ու արձակեց ամէնքը:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ վաղուան նախատեսակը: Հանդիսաւորան էր Գեր. Տ. Հայկազուն եպս. Արքահամեան:

● Ուր. 20 Յուն. — Բ. օր Եմնդեան: Յիւստակ մեղեկոց: Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարագիչն էր, ըստ սովորութեան, Ս. Աթոռոյս Աւագ Թարգմանը՝ Զոգ. Տ. Վաղգէն Արդ. Գրգորեան: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրբէն եպս. Քէմհանեանի նախագահութեամբ կատարուեցաւ հանդիսաւոր հանդիսեան պաշտօն:

● Կիր. 22 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Պատարագիչն էր Զոգ. Տ. Մաշտոց վրդ. Բարխուսեան:

● Դշ. 25 Յուն. — Վաղուան նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան:

● Եշ. 26 Յուն. — Տօն Անուանակոչութեան: Առաւօտեան ժամը 8.30ին, Գեր. Տ. Տիրան Սըրբազանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Նրաշափառ»-ի հանդէսով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Ժամաբարն էր Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան: Գեր. Սրբազանը քարոզեց օրուայ տօնին շուրջ: Ս. Պատարագի ընթացքին, Ընծաբարանի և ժառանգ. վարժարանի բովանդակ ուսանողութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն: Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւն ու ժողովուրդ շքերթով վերադարձան Մայրավանք, ու Հայոց Թաղի մուտքէն «Լոյս ի լուսոյ» շարականի երգեցողութեամբ քարձրացան Պատրիարքարանի դահլիճը, ուր Գեր. Տ. Տիրան Արքեպս. նախագահութեամբ կատարուեցաւ «Տնօրնէք»-ի արարողութիւն: Նոյնը կրկնուեցաւ նաև մառանին, փառին, սեղանատան և խոհանոցին մէջ, ուր օրնուեցաւ նաև հեթիսայի աւանդական ճաշը:

● Ուր. 27 Յուն. — Վաղուան նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանամեան:

● Եր. 28 Յուն. — Տօն ծննդեան Ս. Յովնանու Կարապետի: Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Սուրբ Յովն. Կարապետի խորանին վրայ մատոյց Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան:

● Կիր. 29 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, մեր վերնամատարան մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Դապարանեան: Քարոզեց Գեր. Տ. Տիրան Արքեպիսկ. Ներսոյեան, նիւթ ունենալով օրուան ճաշու Աւետարանէն Կանայի հարսանիքին մէջ կատարուած հրաշքը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Դշ. 17 Յուն. — Կէսօրէ ետք, Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան, ընկերակցութեամբ Թար. Արմենակ Սրկ. Երիվանեանի, մեկնեցաւ Իսրայէլ, Ս. Իննդեան տօնին առթիւ հոգևորապէս մխիթարելու համար տեղւոյն հայութիւնը, և վերադարձան 22 Յունուար, Կիրակի երեկոյ:

● Բշ. 23 Յուն. — Կէսօրէ ետք, Անկլիքան Գեր. Եպիսկոպոսը, Ս. Իննդեան տօնին առթիւ շնորհաւորութեան եկաւ Պատրիարքարան:

● Դշ. 25 Յուն. — Կէսօրէ ետք, Անկլիքան Գեր. Եպս.ը կրկին այցելեց Պատրիարքարան, ներկայացնելու համար Rev. Dr. Norman Goodallը, World Council of Churchesէն:

● Ուր. 27 Յուն. — Կէսօրէ ետք, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Վազգէն Արք. Գրգորբեանի և Տիար Կարպիս Հինդեանի, ներկայ գտնուեցաւ Անկլիքան Եպիսկոպոսարանի մէջ, ի պատիւ Dr. Norman Goodallի տրուած ընդունելութեան:

Ս. ԾՆՆԳԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Ըստ սովորութեան, Երուսաղէմի մէջ, Ս. Իննդեան ձրագայոյցի արարողութիւնները կատարուեցան Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանի տաճանին մէջ պաշտուած երեկոյեան ժամերգութեան և ձրագայոյցի արարողութեան էն ետք, Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան մատոյց Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Ապա, Գեր. Տ. Սուրէն Սրբազան նախագահեց Ս. Իննդեան նախատեսակին, որմէ ետք Ս. Գերեզմանին շուրջանակի դարձմամբ և «Թորնուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը ուղղուեցաւ զէպի մեր Տեսչարանը, ուր կարդացուեցաւ Ս. Իննդեան Աւետարան ու երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Իսկ Հինգշաբթի առաւօտեան ժամը 4ին, Ս. Յակոբեանց Տաճարին մէջ պաշտուեցաւ գիշերային և ապա առաւօտեան ժամերգութիւն: Իսկ հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Թեղանին վրայ մատոյց, ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց վանքի Տեսուչը՝ Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Դապարանեան: Քարոզեց Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան, «Ինչի որդի և կոչեցի անուն նորա Յիսուս» ընտարանով: Ս. Պատարագի ընթացքին, բազմաթիւ հաւատացեալներ հաղորդուեցան: Ապա, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան նախագահեց «Ջրօրնեաց» արտաբաւ կարգին:

Ի յաջակայութեան ժառանգաւոր Սաներու, թէ երէկ և թէ այսօր երգեցողութիւնները կատարուեցան տեղացի աղապիւններու կողմէ:

ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒՄ

Ս. Աթոռոյ Տնօրէն Ժողովը, զնահատելով Ամմանի և շրջակայից Հոգաւոր Հովիւ, Հոգեւորհ. Ս. Կորիւն Վրդ. Մանուէլեանի տասնամեայ գործունէութիւնը, զինք նշանակեց Ս. Յարութեան Տաճարի տեսուչ:

Իսկ Հոգ. Տ. Վազգէն Արք. Գրգորբեան, որ առժամարար կը վարէր վանուցս աւագ Թարգմանի պաշտօնը նշանակուեցաւ Ամմանի և շրջակայից Հոգեւոր Հովիւ:

Հոգ. Տ. Հայկապետ Վրդ. Պայրամեան, որ լրիւ վեց տարիներ վարած է Ս. Յարութեան Տաճարի տեսչութեան պատասխանատու պաշտօնը, կանչուեցաւ վանուցս աւագ-Թարգմանութեան պաշտօնին:

Այս առիթով մեր յարգելի ընթերցողներու ուշադրութեան կը յանձնենք լրելւ պ. Տնօրէն Ժողովոյ նորընտիր կազմին վերընտրեալ անդամներէն մին է Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան, որուն անունը միւս ժողովականներու կարգին մտցած էինք յիշել Սիոնի մեր անցեալ ամսըան թիւին մէջ:

Սիոն, անգամ մը եւս, յանուն Ս. Աթոռոյ Գեր. Տեղապահ Սրբազան Հօր, կուգայ շնորհաւորել այն Գերաշնորհ և Հոգեւորհ պաշտօնականները, մաղթելով անոնց կարողութիւն՝ հասնելու համար Ս. Աթոռոյ պատասխանատու և կարեւոր ծառայութեան և շարունակելու համար իրենց Աստուածաճոյ գործը ի փառս Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ: